ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1831 - Ա **31 մարտի 2009թ.**

ՀԱՂԹԱՆԱԿԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 48 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ԱՐԵՍՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ԳԱՌՆԻԿ ԱՐԵՍՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐԵՍՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ՍԵԴԱ ԱՐԵՍՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գագիկ Արեստի Մուրադյանի (ծնված 16.11.1965թ.), Գառնիկ Արեստի Մուրադյանի (ծնված 28.05.1962թ.), Վարդուհի Արեստի Մուրադյանի (ծնված 10.10.1963թ.), Սեդա Արեստի Մուրադյանի (ծնված 06.09.1959թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակի 3-րդ փողոցի հ. 48 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 755.65քմ, որից 660քմ մակերեսով հողամասը Գագիկ Արեստի Մուրադյանին, Գառնիկ Արեստի Մուրադյանին, Վարդուհի Արեստի Մուրադյանին, Սեդա Արեստի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 95.65քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 04.05.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 16.09.2008թ. հ.2011 և 10.09.2008թ. հ.1949, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20/2-Ե/101 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 26.02.2009թ. հ.20-Ել-1373 եզրակացությունը, համաձայն որի Հաղթանակի 3-րդ փողոցի հ.48 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Հաղթանակի 3-րդ փողոցի հ. 48 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գագիկ Արեստի Մուրադյանի, Գառնիկ Արեստի Մուրադյանի, Վարդուհի Արեստի Մուրադյանի, Սեդա Արեսի Մուրադյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 660քմ մակերեսով հողամասին կից 95.65քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության

իրավունքը 95.65քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Հաղթանակի 3-րդ փողոցի հ. 48 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Հաղթանակի 3-րդ փողոցի հ. 48 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գագիկ Արեստի Մուրադյանի, Գառնիկ Արեստի Մուրադյանի, Վարդուհի Արեստի Մուրադյանի, Սեդա Արեսի Մուրադյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**